# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N2

## N ՀՀ Ո ՄԱ ԾՁԲ-ՍԱՐՔ/2022-2
## ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

**ք. Երևան** **<<05>>.08 .2022թ.**

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ. Մովսիսյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և "Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին" ՓԲԸ-ն, ի դեմս տնօրենի պաշտոնակատար Ա. Բաբայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), հիմք ընդունելով 10.06.2022թ.-ին կնքված ՀՀ Ո ՄԱ ԾՁԲ-ՍԱՐՔ/2022-2 գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

### 1.Համաձայնագրի առարկան, գինը, վճարման կարգը և գործողության ժամկետը

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը հաստատեցին ՀՀ Ո ՄԱ ԾՁԲ-ՍԱՐՔ/2022-2 ծածկագրով պայմանագրի թիվ 1 Հավելվածում (Տեխնիկական բնութագիր և գնման ժամանակացույց) կատարել փոփոխություն՝ ավելացնելով «Բինար» օպտիկական սարքերի և «Իսկրա-1» արագաչափերի ստուգաչափման ծառայությունը:
1.2 10.06.2022թ.-ին կնքված ՀՀ Ո ՄԱ ԾՁԲ-ՍԱՐՔ/2022-2 գնման Պայմանագրի Հավելված 1-ը ներկայացնել նոր խմբագրությամբ:
1.3 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքի կատարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (3) երեք էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի թիվ 1-ը հավելվածը հանդիսանում է համաձայնագրի անբաժանելի մաս:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ոստիկանությունը:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **ՀՀոստիկանություն** | **"Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին" ՓԲԸ** |
| **ք. Երևան, Նալբանդյան 130** | **ք. Երևան, Կոմիտաս 49/4** |
| **ՀՀ Ֆինանսների նախարարության Աշխատակազմի գործառնական վարչություն** | **"Հայբիզնեսբանկ" ՓԲԸ, Կիևյան մ/ճ** |
| **Հ/Հ 900011021947** | **Հ/Հ 1150012490810100** |
| **ՀՎՀՀ 01533334** | **ՀՎՀՀ 00219641** |
| **Հեռ. 010 59 68 57** | |
| **Էլ. հասցեն՝ police_gnumner@police.am** | |
| **Վ. Մովսիսյան** | **Ա. Բաբայան** |
| **/ՀՀոստիկանության պետի տեղակալ/** | **(ստորագրություն)** |
| **(ստորագրություն)** | **Կ.Տ** |
| **Կ.Տ** | |

*Հավելված N*
*«10» հունիսի 2022թ. կնքվա*
*N ՀՀ Ո ՄԱ ԾՁԲ-ՍԱՐՔ/2022-2 ծածկագրով պայմանագր*
*« 05 » 08 2022թ. կնքվա*
*Թիվ 2 Համաձայնագր*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ ԵՎ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Ծառայության | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/Բ | Անվանումը և CPV-կոդը ըստ գնումների պլանի | Տեխնիկական բնութագիրը | Չափման միավորը | Միավոր գինը/Հազար դրամ/ | Ընդհանուր գինը /հազար դրամ/ | Ընդհանուր քանակը | Մատուցման | |
| | | | | | | | Հասցեն | Ժամկետը* |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Սարքերի և ստուգման ծառայություններ **CPV կոդը – 71631110/8** | Ըստ հավելվածի | դրամ | 5 994,0 | 5 994,0 | 1 | Ք. Երևան, Շոպրոնի 77 | |
| ***Ծառայության մատուցումը՝*** | | | | | | | | |
| ***Սկիզբը՝*** | | | | | ***Ավարտը՝*** | | | |
| ***03.01.2022թ.*** | | | | | ***25.12.2022թ.*** | | | |

## Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն  Բ Ն Ո Ւ Թ Ա Գ Ի Ր

Սարքերի և այլ սարքավորումների ստուգաչափման ծառայության

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ ոստիկանությանը պատկանող «Բինար» արագաչափերի, «Յուպիտեր տիպի խմածությունը չափող սարքերի», «Ապակիների մգեցվածությունը չափող սարքերի» և այլ սարքավորումների ստուգաչափման ծառայությունը:

Սարքերի ստուգաչափումը պետք է կատարվի համաձայն մեթոդական ստուգաչափական ձեռնարկի, ՀՍՏ նորմերի պահանջների և ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 19.02.2018թվականի թիվ 133-Ն հրամանի համաձայն:

«Յուպիտեր տիպի խմածությունը չափող սարքերի» շահագործման համար պիտանելիությունը որոշելու նպատակով կատարվող աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է կատարել հետևյալ գործողությունները՝ անալիզատորի ցուցմունքների ճշգրտում, անհրաժեշտության դեպքում, անալիզատորի ցուցմունքի ստուգում, անալիզատորի ցուցմունքների կարգաբերումը, որը կարգավորվում են ըստ ԳՕՍՏ 8.838-2013-ի:

| հ/հ | Անվանումը | Միավորի գինը ներառյալ ԱԱՀ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | «Բինար» օպտիկական սարքերի ստուգաչափում | 6000 |
| 2 | «Իսկրա-1» արագաչափերի ստուգաչափում | 6000 |
| 3 | «Յուպիտեր տիպի խմածությունը չափող սարքերի» ստուգաչափում<br>**Առաջնային ստուգաչափում** | 9600 |
| 4 | «Յուպիտեր տիպի խմածությունը չափող սարքերի» ստուգաչափում<br>**Ընթացիկ ստուգաչափում**<br>«Յուպիտեր տիպի խմածությունը չափող սարքերի» շահագործման համար պիտանելությունը որոշելու նպատակով կատարվող աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է կատարել հետևյալ գործողությունները՝ անալիզատորի ցուցմունքների ճշգրտում, անհրաժեշտության դեպքում անալիզատորի ցուցմունքի ստուգում, անալիզատորի ցուցմունքների կարգաբերումը, որը կարգավորվում է ըստ ԳՈՍՏ 8.838-2013-ի: | 36000 |
| 5 | Լուսաթափանցիկության չափման միջոցների ստուգաչափում | 6600 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**ՀՀոստիկանություն**
**ք. Երևան, Նալբանդյան 130**
**ՀՀ Ֆինանսների նախարարության**
**Աշխատակազմի գործառնական վարչություն**
**Հ/Հ 900011021947**
**ՀՎՀՀ 01533334**
**Հեռ. 010 59 68 57**
**Էլ. հասցեն՝ police_gnumner@police.am**

**_____ Վ.Մովսիսյան**
**/ՀՀոստիկանության պետի տեղակալ/**
**(ստորագրություն)**
**Կ.Տ**

**ԿԱՏԱՐՈՂ**
**"Ստանդարտացման և չափագիտության**
**ազգային մարմին" ՓԲԸ**
**ք. Երևան, Կոմիտաս 49/4**
**"Հայբիզնեսբանկ" ՓԲԸ, Կիևյան մ/ճ**
**Հ/Հ 1150012490810100**
**ՀՎՀՀ 00219641**

**_____ Ա. Բաբայան**
**(ստորագրություն)**
**Կ.Տ**